



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՑԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է ամբիոնի նիստում

Քիմիայի և կենսաբանության
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ Ղազարյան Արմինե Հրաչիկի /Ա.Ա.Հ/

Արձանագրություն № 1

«27» օգոստոս 2025թ.

**ՔԿ/բ-184- Արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն
ԴԱՍԸՆԹԱՑԻ**

Դասիչ դասընթացի անվանում

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Մասնագիտություն՝

- 022201.00.6 – Պատմություն
- 031301.00.6 - Հոգեբանություն
- 042101.00.6 – Իրավագիտություն
- 023102.00.6 – Ռուսաց լեզու և գրականություն
- 023102.00.6 – Անգլերեն լեզու և գրականություն
- 011301.00.6 – Տարրական մանկավարժություն և մեթոդիկա

/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝

- 022201.01.6 - Պատմություն
- 031301.01.6 – Հոգեբանություն
- 042101.01.6 – Իրավագիտություն
- 023102.01.6 – Ռուսաց լեզու և գրականություն
- 023102.02.6 – Անգլերեն լեզու և գրականություն
- 011301.01.6 – Տարրական մանկավարժություն և մեթոդիկա

Որակավորման աստիճան՝ Բակալավր

/բակալավր, մագիստրատուրա/

Ամբիոն՝

Քիմիայի և կենսաբանության
/ամբիոնի լրիվ անվանումը/

Ուսուցման ձևը՝

Հեռակա
/տոկա, հեռակա/

Կուրս/կիսամյակ

հեռակա 2-րդ, 3-րդ, 5-րդ կուրսերի 4- 5-10-րդ կիսամյակ

Դասախոս(ներ)՝

բ.գ.դ. պրոֆեսոր Հասմիկ Եղիազարյան

/անուն, ազգանուն/

Էլ. հասցե/ներ hasmikyeghiazaryan@mail.ru

Վանաձոր- 2025թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում 3

2. Դասընթացի նպատակը և խնդիրները..... 3

3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները /դասընթացները/ 4

4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը և /կամ կոմպլեքսայինները 4

5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների..... 7

6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը 7

7. Ուսումնական աշխատանքների տեսակները 7

8. Դասավանդման մեթոդներ 9

9. Ուսումնառության մեթոդներ Ошибка! Закладка не определена.

10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների..... 10

11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ..... 10

12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ..... 11

12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ..... 11

12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ 12

12.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ 14

13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում 16

14. Գնահատում 17

14.1. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներ 17

14.2. Ուսանողների գիտելիքների ստուգում..... 17

14.3. Հարցաշար 18

14.4. Գնահատման չափանիշներ..... 19

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐԻՉ 20

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում.

§Արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն! առարկայի ուսումնամեթոդական փաթեթը կազմված է բակալավրի հիմնական կրթական ծրագրով բոլոր մասնագիտությունների կրթական չափորոշիչների հենքով՝ ուսումնական պլանի պահանջների համաձայն, առարկայի բաղադրիչների հիման վրա և նպատակաուղղված է բակալավրական կրթության կազմակերպման, դասավանդման որակի բարձրացմանը:

Առարկայական փաթեթը կարգավորում է §Արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն! առարկայի ուսումնամեթոդական նյութերով ապահովման, պարբերաբար թարմացման, գիտաճյուղի նոր մոտեցումների ոգուն համապատասխանեցման գործընթացը, նպաստում է գործնական կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

2. Դասընթացի նպատակը և խնդիրները.

2.1. Դասընթացի նպատակն է.

Արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնությունն առարկան ճանաչողական գիտություն է, որն առավել է առնչվում հասարակության ամեն մի անդամի առողջական և կենսական շահերի հետ:

Առարկան ուսումնասիրում է արտակարգ իրավիճակների ազդեցությունը բնակչության առողջական վիճակի վրա, մարդու մարմնի տարբեր մասերի վնասվածքներն ու ախտահարումները՝ ըստ աղետի ծագումից և տեսակից: Արտակարգ իրավիճակներում և դժբախտ դեպքերի ժամանակ առաջին բուժօգնության ճիշտ և ժամանակին ցուցաբերմամբ են պայմանավորվում տուժածի, հիվանդ մարդու կյանքը և հետագա բուժման հաջողությունը: Ուստի յուրաքանչյուր անհատ պետք է պատշաճ չափով տեղյակ լինի առաջին բուժօգնություն ցուցաբերելու եղանակներին:

Առարկան կարևոր նշանակություն ունի ուսանողների կրթական ծրագրերի շրջանակում, քանզի առաջին բուժօգնության ցուցաբերումը ապագա մանկավարժների քաղաքացիական և մարդկային պարտքն է՝ անկախ ընտրած մասնագիտությունից:

§Արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն! առարկան ամբողջությամբ համապատասխանում է ԲՄԿ ՊԿԶ-ի պահանջներին:

2.2. Դասընթացի խնդիրներն են.

Առարկայի ուսուցանումը նշանակալի հիմք է հանդիսանում ուսանողի անհատական հետաքրքրությունների, ինքնաճանաչման, ինքնակառավարման, ինքնօգնության և փոխօգնության համար, ինչպես նաև, տուժածի/հիվանդի վիճակի գնահատման, գնման, ախտորոշման, առաջին բուժօգնություն ցուցաբերելու, վիճակի վերահսկման, հետագա բարդությունների կանխարգելման և աղետի տարածքից շտապ դուրսբերման իմացության և ճիշտ կիրառման տեսակետից:

Դասընթացի խնդիրներն են՝

- ուսուցանել արտակարգ իրավիճակներից առաջացած ախտահարումների, վնասվածքների /մեխանիկական, ջերմային, ճառագայթային/, թունավորումների բնութագրերը, առաջին օգնության ցուցաբերման սկզբունքները, առանձնահատկությունները և կատարման կանոնները՝ կախված աղետի տեսակից /երկրաշարժ, հրդեհ, ջրհեղեղ, կայծակ, դժբախտ պատահարներ և այլն/;
- ուսուցանել առաջին բուժօգնության շրջանակում անցկացվող միջոցառումների ծավալի և համապատասխան անհրաժեշտ գործողությունների կատարման պայմաններին՝ ըստ ախտահարման տեսակի;

- ձևավորել և զարգացնել տուժածի/հիվանդի մանրամասն գննելու հմտություններ՝ նրա կյանքին ու առողջությանը սպառնացող վնասվածքների և այլ ախտահարումների հայտնաբերման, ախտորոշման, առաջին օգնության ցուցաբերման, վիճակի վերահսկման, կողքային անվտանգ դիրքով տեղավորման, աղետի տարածքից շտապ դուրսբերման և տեղափոխման նպատակով;
- ձևավորել և զարգացնել անհրաժեշտ հմտություններ և կարողություններ առաջին օգնություն ցույցաբերելու նպատակով՝ շնչառական, սրտանոթային համակարգերի գործունեության ախտահարման, արյունահոսությունների, հենաշարժիչ համակարգի վնասվածքների, ջերմային և քիմիական այրվածքների, քիմիական և կենցաղային թունավորումների, մարմնի տարբեր հատվածների ախտահարումների դեպքում:

3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները /դասընթացները/

Արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն դասընթացը կամրնտրական դասընթաց է, և նախատեսված է համալսարանի բակալավրի հեռակա ուսուցման մասնագիտությունների կրթական ծրագրերի համար՝ չորրորդ, հինգերորդ, յոթերորդ և տասներորդ կիսամյակներում: Արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնության դասընթացը հնարավորություն է տալիս ուսանողների մոտ ձևավորել գործնական կարողություններ և հմտություններ տուժածի/հիվանդի մանրակրկիտ գննման, վիճակի գնահատման, ախտորոշման, առաջին բուժօգնության ցուցաբերման, վիճակը վերահսկելու, աղետի տարածքից շտապ դուրսբերման և տեղափոխման հարցերում:

4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը¹ և /կամ կոմպլեքսնցիաները.

Ուսուցանվելուց հետո ուսուցանվողը պետք է գիտենա

- Արտակարգ իրավիճակների /ՄԻ/ սահմանումը, դասակարգումը, բնութագրերը, նկարագրերը:
- Առաջին բուժօգնության /ԱԲՕ/ ընդհանուր սկզբունքները. տեսակները, խնդիրները:
- ԱԲՕ շրջանակում անցկացվող միջոցառումների ծավալը, գործողությունների հերթականությունը, գնահատումը: Տուժածների շտապ դուրսբերումը և տեղափոխումը:
- Օրգանիզմի կենսագործունեությունը ապահովող գործառույթների մասին:
- Գիտակցության խանգարումների ձևերը, նշանները:
- Անգիտակից տուժածին Կողքային անվտանգ դիրքի (ԿԱԴ) բերման մեթոդիկան:
- Կյանքի և մահվան նշանները, որոշման մեթոդները:
- Սրտի և շնչառության կանգի ժամանակ ախտաբանական պրոցեսները և վերականգման հրատապությունը: Կլինիկական մահվան ախտանիշները:
- Շնչուղիների անցանելիության ապահովումը:
- Արհեստական շնչառության իրականացման տեսակները («բերան-բերան», «բերան-քիթ»):
- Սիրտ-թոքային վերակենդանացում (ՍԹՎ), իրականացման կանոնները:
- Արյունահոսության տեսակները, առաջացման պատճառները, հիմնական ախտանիշները, ծանրության աստիճանները:
- Բուժօգնությունը արյունահոսությունների ժամանակ: Արտաքին արյունահոսությունների ժամանակավոր դադարեցումը ձեռքի տակ եղած և հաշվեցուցակային միջոցներով:
- Քթային արյունահոսություն, տեսակները, ցուցաբերվող առաջին բուժօգնության քայլերը:

¹ <http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf>

- Արյունահոսող տուժածների տեսակավորումը, խնամքը և տեղափոխումը:
- Վերքեր և վնասվածքներ. սահմանումը, տեսակները, առաջացման մեխանիզմները, նշանները, վտանգը, և առաջին բուժօգնության հիմունքները:
- Վիրակապման նպատակները, վիրակապերի տեսակները և տեղադրման կանոնները:
- Արտաքին ազդակների ազդեցությունը օրգանիզմի վրա:
- Այրվածքների առաջացման մեխանիզմները, դասակարգումը, ծանրության աստիճանը, նշանները, ԱԲՕ:
- Այրվածքների ժամանակ բուժօգնության ցուցաբերման գործողությունները, վնասված հյուսվածքի առաջնային մշակումը, տուժածների տեսակավորումը, տեղափոխումը:
- Ցրտահարություն. առաջացման պատճառները, ծանրության աստիճանները, տուժածների տեսակավորումը, բուժօգնության ծավալը աղետի օջախում, տեղափոխման եղանակները:
- Էլեկտրական հոսանքի և կայծակի տեղային և ընդհանուր ազդեցությունն օրգանիզմի վրա, բուժօգնության ծավալը և կազմակերպումը:
- Ջրահեղձման տեսակները, նշանները, բուժօգնությունը:
- Տուժածի տեղաշարժման, շտապ դուրսբերման և տեղափոխման հիմունքները:
- Սրտի աշխատանքի խանգարումները. ցավ կրծքավանդակում՝ կրծքահեղձուկի նույնիսկ, սրտամկանի կաթվածի, սրտային անբավարարության նշանները, բուժօգնության քայլերը:
- Նյարդային համակարգի գործունեության խանգարումների (գլխացավեր, կաթվածներ, ուղեղի արյան շրջանառության սուր խանգարումներ) ձևերը, պատճառները, ախտորոշումը, առաջին բուժօգնությունը:
- Ցնցումային սինդրոմ (Էպիլեպտիկ, հիստերիկ և այլն). պատճառները, ախտորոշումը, առաջին բուժօգնությունը:
- Կենցաղային թունավորումներ: Օձերի և թունավոր միջատների խայթոցներ:
- ԱԻ-ում օգտագործվող տիպային սարքավորումներ, պարագաներ, դեղարկղեր.

տեսակները, հագեցվածությունը, կիրառվող դեղամիջոցները և դրանց օգտագործման ձևերը:

Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է կարողանա

- Ձեռք բերած տեսական և գործնական գիտելիքների կիրառում:
- Որոշել բնական աղետի տեսակը, գործողությունների հերթականությունը:
- Գնահատել դեպքի վայրը: Հայտնաբերել տուժածին բուժօգնության ցուցաբերմանը խանգարող հանգամանքները:
- Իրականացնել տուժածների առաջնային և երկրորդային գնումը, վիճակի գնահատումը, բուժօգնության ցուցաբերումը, տեսակավորումը և տեղափոխումը:
- Գնահատել օրգանիզմի կենսագործունեությունը:
- Չափել անոթազարկի հաճախականությունը քնային զարկերակի պրոեկցիայիով:
- Գնահատել տուժածի գիտակցության վիճակը:
- Անգիտակից տուժածին բերել կողքային անվտանգ դիրքի՝ ԿԱԴ-ի:
- Տարբերակել կյանքի և մահվան նշանները, որոշման մեթոդները:
- Ապահովել շնչուղիների անցանելիությունը:
- Իրականացնել արհեստական շնչառություն՝ «բերան-բերան», «բերան-քիթ»:
- Կատարել կրծքային սեղմումներ և ներփչումներ:
- Իրականացնել սիրտ-թոքային վերակենդանացում /ՄԹՎ/:
- Գնահատել ՄԹՎ արդյունավետությունը:
- Արագ որոշել արյունահոսության տեսակը, ծանրության աստիճանը:
- Ցուցաբերել առաջին բուժօգնություն արյունահոսությունների ժամանակ:

- Տիրապետել արտաքին արյունահոսությունների ժամանակավոր դադարեցմանը ձեռքի տակ եղած և հաշվեցուցակային միջոցներով (ճնշող վիրակապ, առավելագույն տարածում և ծալում, սեղման կետեր, լարան, ոլորան և այլն):
- Որոշել քթային արյունահոսության տեսակը և ցուցաբերել բուժօգնություն:
- Կատարել վնասված հյուսվածքի առաջնային մշակումը, ասեպտիկայի և անտիսեպտիկայի ապահովումը:
- Կատարել վիրակապման ձևի ճիշտ ընտրություն և վիրակապել վնասված մարմնամասը:
- Իրականացնել վիրակապում բինտային վիրակապով և ձեռքի տակ եղած միջոցներով (եռանյունաձև վիրակապ, պարաստիկներ և այլն):
- Որոշել այրվածքի ծանրության աստիճանը, այրվածքի մակերեսի չափը:
- Իրականացնել այրվածքներով տուժածների խնամքը:
- Որոշել քիմիական այրվածքի ծանրության աստիճանը:
- Որոշել ցրտահարության աստիճանները, ցուցաբերել առաջին բուժօգնություն:
- Իրականացնել ցրտահարություններով տուժածների խնամքը:
- Տեսակավորել, ցուցաբերել առաջին բուժօգնություն և տարահանել հոսանքահարված և կայծակնահարված տուժածներին:
- Ցուցաբերել բուժօգնություն ջրահեղձման դեպքում:
- Ճանաչել կրծքահեղձուկի նույնի, սրտամկանի ինֆարկտի, սրտային անբավարարության նշանները և յուրաքանչյուր դեպքում ցուցաբերել համապատասխան բուժօգնություն:
- Կատարել զարկերակային ճնշման չափում:
- Տիրապետել աղետի վայրում առկա բժշկական սարքավորումների և պարագաների օգտագործման կարգին, օժանդակ գույքին և հանդերձանքին:
- Դեղանյութի զետեղումը ներարկիչի մեջ:
- Դեղանյութի ենթամաշկային ներարկումը:
- Դեղանյութի ներմկանային ներարկումը:
- Դեղանյութի ներերակային ներարկումը:

Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է տիրապետի

- անհրաժեշտ հմտություններ և կարողությունների տիրապետում տուժածի/հիվանդի գնման, ախտորոշման, առաջին բուժօգնություն ցուցաբերելու նպատակով,
- տուժածի/հիվանդի վիճակի գնահատում, վերահսկում, դուրսբերում, տեղափոխում,
- տուժածի/հիվանդի խնամքի կանոնների յուրացում,
- աղետի վայրում առկա բժշկական սարքավորումների և պարագաների օգտագործման կարգին,
- առաջին բուժօգնության դեղարկղերում առկա բոլոր դեղամիջոցներին և նրանց օգտագործման ձևերին:

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ կոմպետենցիաները. ա) Գործիքային կոմպետենցիաներ (այսուհետև՝ ԳԿ)

- վերլուծության և համադրության կարողություն (ԳԿ-1),
- կազմակերպչական կարողություն (պլանավորում, կազմակերպում, ղեկավարում, վերահսկում) (ԳԿ-2),
- որոշումներ կայացնելու կարողություն (ԳԿ-3),
- սկզբունքայինության պահպանման կարողություն (ԳԿ-4):

բ) Միջանձնային կոմպետենցիաներ (ՄՁԿ)

- քննադատության և ինքնաքննադատության կարողություն (ՄՁԿ - 1),
- միջանձնային գործնական հմտություններ (ՄՁԿ - 2),

գ) Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)

- գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն (ՀԳԿ - 1),
- նոր իրավիճակներին հարմարվելու և արագ կողմնորոշվելու կարողություն (ՀԳԿ - 2),
- ինքնուրույն աշխատելու կարողություն (ՀԳԿ - 3):
- տիրապետի առաջին նախաբժշկական օգնության հիմնական հասկացություններին, ախտաբանական երևույթներին:

5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների.

«Արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն» դասընթացից ձեռք բերած գիտելիքներն և հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել առաջին բուժօգնություն ցույցաբերելով տարբեր արտակարգ իրավիճակներում:

6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

| Չափանիշ | Առկա ուսուցման համակարգ | Հեռակա ուսուցման համակարգ |
|---|-------------------------|---------------------------|
| Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ) | | 2 կրեդիտ/60 ժամ |

| Աշխատանքի տեսակը | Ժամաքանակ | Ժամաքանակ |
|---|-----------|-----------|
| Դասախոսություն | | 4 |
| Գործնական աշխատանք | | 4 |
| Մեմինար պարապմունք | | |
| Լաբորատոր աշխատանք | | |
| Ինքնուրույն աշխատանք | | 52 |
| Ընդամենը | | 60 |
| Ստուգման ձևը (ստուգարք/ ընթացիկ քննություն/ հանրագումարային քննություն) | | ստուգարք |

7. Ուսումնական աշխատանքների տեսակները.

- **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում է և մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեսզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:

- **Գործնական աշխատանքների** ժամանակ ուսանողը կատարում է լսարանային աշխատանք՝ դասախոսի անմիջական ղեկավարման ներքո: Գործնական պարապմունքները անցկացվում են գործնական խնդիրների լուծման, առաջադրանքների իրականացման, թեստերի, իրավիճակային վերլուծությունների, գործարար խաղերի, խմբային աշխատանքների, տնային առաջադրանքների, ինտերակտիվ ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և ամրապնդման նպատակով: Դասախոսն առաջադրում է գործնական պարապմունքների թեման, նպատակը, խնդիրները, այն հարցերը, որոնք պետք է լուծել գործնական պարապմունքի ընթացքում, գործնական պարապմունքի անցկացման մեթոդները և պատասխանում է ուսանողների տված հարցերին:

- **Մեմինար պարապմունքները** խմբային պարապմունքների հիմնական տեսակներից է, որի ընթացքում ուսանողը սովորում է բանավոր շարադրել նյութը, պաշտպանել իր տեսակետները և եզրահանգումները: Մեմինարի ընթացքում ուսանողները քննարկում, պատասխանում են թեման, զեկույցները և ռեֆերատները, որոնք հանձնարարել է դասախոսը:

Մեմինարին պատրաստվելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել հիմնական և լրացուցիչ գրականություն տվյալ թեմայով: Գրականության ուսումնասիրությունից և համառոտագրումից հետո պետք է կազմել պլան՝ բանավոր պատասխանի համար, ապա մտածել էլույթի բովանդակության, հարցադրումների և պատասխանների մասին:

- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են՝

- **Ռեֆերատ** – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
- **Գործարար խաղեր** – պայմանական իրավիճակներում սոցիալ-տնտեսական համակարգերի և մարդկանց մասնագիտական գործունեության կառավարման գործընթացների մոդելավորում՝ առաջացող հիմնախնդիրների ուսումնասիրման և լուծման նպատակով:
- **Էսսե** – արձակ ստեղծագործություն՝ քննադատության և լրագրության ոլորտի որևէ խնդրի ազատ վերլուծություն:
- **Կլոր սեղան** – ինքնուրույն աշխատանքի ձևին բնորոշ է թեմատիկ բանավեճի համադրումը խմբային աշխատանքի հետ:
- **Կոնկրետ իրավիճակների վերլուծություն** – ուսանողների ակտիվ գործունեության կազմակերպման ամենարդյունավետ և տարածված ձևերից մեկն է, որը զարգացնում է մասնագիտական և կեցությանը վերաբերող տարբեր հարցերի վերլուծական կարողությունը:
- **Նախագծերի մեթոդ** – ուսումնաձանաչողական, ստեղծագործական կամ խաղային համատեղ գործունեության տեսակ է, սովորող-գործընկերների միջև, որոնք ունեն ընդհանուր նպատակ և համաձայնեցված միջոցներ՝ ուղղված որևէ խնդրի լուծմանը կամ որոշակի արդյունքի ձևակերպմանը:
- **Հարցի նախապատրաստման մոդել** – կամավորության սկզբունքով ընտրված ուսանողն իր նախընտրած հակիրճ ձևով նախապատրաստում է տվյալ առարկայից քննության կամ ստուգաթղթի հարցերի իր պատասխանների փաթեթը: Քննությունից (ստուգաթղթից) 1 շաբաթ առաջ նա հանձնում է փաթեթը դասախոսին, որը ստուգում է

այդ նյութերը և որոշում դրանց համապատասխանությունը տվյալ առարկայի բովանդակությանը:

- **Ինքնուրույն աշխատանք համացանցում** – նոր տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝ համացանցում անհրաժեշտ տեղեկատվության որոնման համար, երկխոսություն համացանցում, թեմատիկ ցանցային էջերի օգտագործում:
- **Աշխատանքային տեսք** – նախատեսված է ուսանողների ինքնուրույն աշխատանքների համար և թույլ է տալիս գնահատել ուսումնական նյութի յուրացման աստիճանն ուսանողների կողմից:
- **Զեկույց** – որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ ստացած արդյունքների և կատարած եզրակացությունների ներկայացում ուսանողի կողմից:
- **Հարցազրույց** – վերահսկողության միջոց, որը կազմակերպվում է որպես հատուկ զրույց դասավանդողի և ուսանողների միջև՝ կապված այնպիսի թեմայի հետ, ինչպիսին կարգապահությունն է, և նախատեսված է հստակեցնել ուսանողների գիտելիքների շրջանակը կոնկրետ թեմայի, հարցի վերաբերյալ:

8. Դասավանդման մեթոդներն են՝ հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, թեմատիկ սեմինար, սեմինար-բանավեճ, գործնական աշխատանք՝ անհատական և խմբային, ուսուցում գործողությամբ (action learning), իրավիճակային խնդիրների վերլուծություն, գործարար խաղեր:

9. Ուսումնառության մեթոդներն են՝ մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, ալգորիթմների և հրահանգների կազմում, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում, փորձի/հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում:

10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների.

| h/h | Թեմա (բաժին) | Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների | | |
|-----------------|--|--|--------------------------|--------------------------|
| | | ընթացակարգի ընթացում | հարցազրույցի ընթացում | հարցազրույցի ընթացում |
| 1. | Արտակարգ իրավիճակների սահմանումը, դասակարգումը: Բնական, տեխնոգեն, մարդածին և կենսաբանական ծագման արտակարգ իրավիճակների բնութագրերը, կանխարգելման մեթոդները: Առաջին բուժօգնության /ԱԲՕ/ ընդհանուր սկզբունքները. տեսակները, խնդիրները, անցկացվող միջոցառումների ծավալը, գործողությունների հերթականությունը, գնահատումը: Տուժածների տեսակավորումը, շտապ դուրսբերումը և տեղափոխումը: Օրգանիզմի կենսագործունեությունը ապահովող գործառույթների ախտահարումների գիտակցության խանգարումների /կողքային անվտանգ դիրք (ԿԱԴ)/, սահմանային վիճակի, սրտի և շնչառության կանգի /սիրտ-թոքային վերակենդանացում/, ԱԲՕ: | 2 | 2 | |
| 2. | Արյունահոսության տեսակները, բնութագիրը, առաջացման պատճառները, ախտանիշները, ծանրության աստիճանները, բուժօգնությունը: Արտաքին արյունահոսությունների ժամանակավոր դադարեցումը ձեռքի տակ եղած և հաշվեցուցակային միջոցներով: Արտաքին ազդակների ազդեցությունը օրգանիզմի վրա այրվածքներ, ցրտահարություն, հոսանքահարում, կայծակնահարում, ջրահեղձում. առաջացման պատճառները, ծանրության աստիճանները, բուժօգնության ծավալը, տուժածների տեղափոխման եղանակները: | 2 | 2 | |
| 3. | Տես 12.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ | | | 26 |
| 4. | Տես 12.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ | | | 26 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 4 | 4 | 60 |

11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

| h/h | Անվանումը/հեղինակ | Հրատարակության տարի |
|------------------------------------|---------------------------------------|---------------------|
| Հիմնական գրականություն (ՀԳ) | | |
| 1. | Առաջին բուժօգնություն / Ն.Մ.Գրիգորյան | 2013 |

| | | |
|-------------------------------------|--|------|
| 2. | Արտակարգ իրավիճակների բժշկատակտիկական բնութագրերը / Ս.Ն. Հովհաննիսյան | 2014 |
| 3. | Մեթոդական ցուցումներ բժշկագիտության հիմունքներ և առողջության պահպանում ու արտակարգ իրավիճակներում առաջին բուժօգնություն առարկաների գործնական պարապմունքների վերաբերյալ /Վ.Ս.Մադոյան, Լ.Վ.Եդոյան, Հ.Գրիգորյան | 2015 |
| 4. | Первая помощь. Учебное пособие для лиц, обязанных и/или имеющих право оказывать первую помощь Дежурный Л.И., Шойгу Ю.С. и др.. | 2018 |
| 5. | Оказание доврачебной медицинской помощи при неотложных и экстренных состояниях /Кадыков В.А., Мохов Е.М., Морозов А.М. | 2024 |
| 6. | Атлас сестринских манипуляций / Касимовская Н.А., Бояр Е.А., Антюшко Т.Д. | 2023 |
| 7. | Сестринское дело в системе первичной медико-санитарной помощи /Рубан Э. Д. | 2022 |
| 8. | Оказание первой помощи в чрезвычайных ситуациях /Смирнова Т. П., Кострюкова Н. В., Елизарьев А. Н. | 2021 |
| 9. | Учебное пособие по оказанию первой помощи /Фомичев В.А., Королева О.В. | 2017 |
| Լրացուցիչ գրականություն (ԼԳ) | | |
| 1. | Բնակչության պաշտպանությունը արտակարգ իրավիճակներում և պատերազմի ժամանակ / Գ. Ն. Ճաղարյան | 2016 |
| 2. | Վենսագործունեության անվտանգություն / Ռ.Պ. Խալաթյան, Ս.Ն. Սարգսյան, Վ.Ս. Խիզանցյան | 2022 |
| 3. | Медицина чрезвычайных ситуаций / Гаркави А.В., Кавалерский Г.М. и др. | 2023 |
| 4. | Медицина катастроф / Левчук И.П., Третьяков Н.В. | 2015 |
| 5. | Первая помощь. Справочное пособие / Белорусское Общество Красного Креста | 2016 |
| 6. | Руководство по инфекционным болезням / Семенов В. М. | 2008 |
| 7. | Трансмиссивные болезни / Всемирная организация здравоохранения | 2020 |

12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

| h/h | Թեմա | Ուսումնասիրվող հարցեր | Ժամաքանակ | Գրականություն |
|-----|--|---|-----------|--|
| 1. | Արտակարգ իրավիճակների սահմանումը, դասակարգումը: Բնական, տեխնոգեն, մարդածին և կենսաբանական ծագման արտակարգ իրավիճակների բնութագրերը, կանխարգելման մեթոդները: Առաջին բուժօգնության /ԱԲՕ/ ընդհանուր սկզբունքները. տեսակները, խնդիրները, անցկացվող միջոցառումների ծավալը, գործողությունների | Արտակարգ իրավիճակների տեսակները, դասակարգումը: Բնական, տեխնոգեն, մարդածին և կենսաբանական ծագման աղետների բնութագրերը, հետևանքները, կանխարգելման մեթոդները: Աղետի օջախում առաջին բուժօգնության տեսակները, նպատակները, խնդիրները, ծավալն ու յուրահատկությունները: Տուժած տարածքից շտապ | 2 | ՀԳ 1-3, ԼԳ 1-3 դասախոս. էլէկ. տարբերակ և ինտերնետ |

| | | | | |
|----|---|---|---|---|
| | <p>հերթականությունը, գնահատումը: Տուժածների տեսակավորումը, շտապ դուրսբերումը և տեղափոխումը:</p> <p>Օրգանիզմի կենսագործունեությունը ապահովող գործառույթների ախտահարումների գնահատում՝ գիտակցության խանգարումների, սահմանային վիճակի, սրտի և շնչառության կանգի ԱԲՕ-ը:</p> | <p>դուրսբերումը և տեղափոխումն անվտանգ վայր:</p> <p>Դեպքի վայրի գնահատումը և վերլուծությունը: Տուժածների գնումը և վիճակի գնահատումը, նախնական ախտորոշումը: Օրգանիզմի կենսագործունեության գնահատում՝ գիտակցության խանգարումների, սրտի և շնչառության կանգի, շնչուղիների խցանման ժամանակ, ախտորոշումը և վերականգման հրատապությունը:</p> | | |
| 2. | <p>Արյունահոսությունների տեսակները, բնութագիրը, առաջացման պատճառները, հիմնական ախտանիշները, ծանրության աստիճանները: Բուժօգնությունը արյունահոսությունների ժամանակ:</p> <p>Քթային արյունահոսություն. տեսակները, ցուցաբերվող առաջին բուժօգնության քայլերը: Արտաքին ազդակների ազդեցությունը օրգանիզմի վրա:</p> <p>Այրվածքների առաջացման մեխանիզմը, դասակարգումը, ծանրության աստիճանը, բնորոշ նշանները, ԱԲՕ: Ցրտահարություն, հոսանքահարում, կայծակնահարում, ջրահեղձում. առաջացման պատճառները, ծանրության աստիճանները, բուժօգնության ծավալը, տուժածների տեղափոխման եղանակները:</p> | <p>Արտաքին արյունահոսությունների ժամանակավոր դադարեցումը հաշվեցուցակային և ձեռքի տակ եղած միջոցներով, տուժածների խնամքը, տեղափոխումը:</p> <p>Այրվածքի ծանրության որոշումը ըստ այրվածքի խորության, մակերեսի, մարմնի վրա տեղակայման, տուժածի տարիքի և առողջական վիճակի: Բուժօգնության ցուցաբերում և տարահանում ցրտահարություններով, հոսանքահարված և կայծակնահարված տուժածներին:</p> | 2 | <p>ՀԳ 2, ՀԳ 4, ՀԳ 5, ՀԳ 7-9, ԼԳ 2, ԼԳ 3, ԼԳ 5, դասախոս. էլեկ. տարբերակ և ինտերնետ</p> |

12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնասիրողական քարտ

| h/h | Թեմա | Ուսումնասիրվող հարցեր | Ժամաքանակ | Ստուգման ձևը | Գրականություն |
|-----|--|--|-----------|--|--------------------------|
| 1. | <p>Արտակարգ իրավիճակների դասակարգումը, բնութագրերը, կանխարգելման մեթոդները:</p> <p>Առաջին բուժօգնության /ԱԲՕ/ ընդհանուր սկզբունքները. տեսակները, խնդիրները, անցկացվող միջոցառումների ծավալը, գործողությունների հերթականությունը, գնահատումը: Տուժածների տեսակավորումը,</p> | <p>Երկրաշարժերի տեսակները, ուժգնության գնահատումը միջազգային սանդղակով: Սողանքների, հրդեհների, ջրհեղեղների, կայծակների բնութագրերը, կանխարգելումը: Բնական աղետի տեսակի որոշում:</p> <p>Մանիտարական կորուստների ընդհանուր բնութագիրը, դասակարգումը, ծավալը և կառուցվածքը՝ կախված աղետի տեսակից: Դեպքի վայրի գնահատումը և վերլուծությունը: Աղետի օջախում բուժօգնության տեսակների նպատակները, խնդիրները, բնութագրերն ու յուրահատկությունները:</p> | 2 | <p>գնահատվում է գործնական աշխատանքի կատարման կարողություններն ու հմտությունները, աշխատանքի հիմնավոր բանավոր և գրավոր վերլուծությունը</p> | <p>ՀԳ 1-9 ԼԳ 1-7</p> |

| | | | | | |
|----|---|---|---|--|-----------------------------------|
